արուեստական կերպով պահպանելով Եւրոպան ինչ հեռանք է ստանում. խռովութիւններ, ձնշում, ֆանատիկոսութիւն, անկարգութիւններ, աւազակութիւն, խոլերա և ժանտախտ։

Այդ հեռանքները դեռ շատ անգամ իրանց զգալ կը տան լուսաւորված Եւրոպային։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

Նոյեմբերի 8-ին

Կաղզուանը, որ ընկած է Երասխի հարաւային կողմը, Մամաքար լեռան հիւսիսային կողմը՝ այդ Մամաքար լեռաը սահման է ռուսաց և տաճկաց. դորա հարաւային կողմն է ընկնում Ալաշկերտը, յիշեալ լեռաը շարունակութիւն է Գէօսա-դաղ լեռներին, որոնք դէպի արևմտահարաւային կողմն են, իսկ Մամաքարը շարունակվում է արևելահարաւային կողմից և միանում է Սեւան լեռան հետ։ Մամաքար լեռից դէպի հիւսիս կաղզուանի արևելեան կողմը ձգված է մի ձոր Նոյն լեռան անունով (Մամաձոր)։ Կաղզուանը ընկնելով Երասխի, Մամաքար լեռան և Մամաձորի մէջ տեղ մի փոքրիկ փոս է, որտեղ են՝ քաղաքը, այգիները և դաշտերը։—Քաղաքը շատ մօտ է Մամաքար լեռան ստորոտին, որ բոլորովին նմանութիւն չունի քաղաքի, կարելի է ասել գիւղաքաղաք։ Այժմ բնիկ հայ բնակիչ կայ երկու հարիւր տուն, իսկ օտարականք, որոնք վերջին պատերազմից յետոյ եկած են, տներ և այգիներ են առած, կը լինեն հարիւր տուն. օտարականք գլխաւորապէս են՝ ալէքսանդրապօլցի, բիթլիսցի և հին բայազէդցի։ Թէպէտ առաջ եղել են այստեղ հինգ հարիւր տուն տաճիկներ, բայց այս վերջին ժամանակներում համարեա բոլորը գաղթել են և մնացողները ևս մինչև մարտ ամիս բոլորովին կը գնան։

Տեղի բնիկ ժողովուրդը ըստ կարողութեան կարելի է երկու կարգ բաժանել, իսկ պարապմանց նայելով կարելի է մի ասել, որովհետև հարուստներն էլ այգեպան են և աղքատներն էլ. ով որ երկու էշ ունի՝ նա հարուստ է, պատճառ որ նա քարվան ունի։ Այդտեղի բնակիչները իւրաքանչիւրը երկու ձեռք տուն ունեն, մի ձեռքը քաղաքում, միւսը այգիում. երբ որ գարունը սկսվում է, մայիս ամսից նրանք ընտանիքով քոչում են այգիները, այնուհետև քաղաքում կաղզուանցի չէք կարող տեսնել։

Գարունից սկսած խեղճ կաղզուանցին իր էշերը առաջ գցած թէ հարուստ, թէ աղքատ, շաբաթը երեք անգամ գնում է Ղարս իր այգիի թաց մրգերը ծախելու, իսկ այգիում իր ընտանիքը. երեխայքը. ծերը և պառաւը աշխատում են, ժողովում են, բեռները կապում են մինչև տան տղամարդը երրորդ օրը գայ Ղարսից, և դեռ մի գիշեր չը հանգստացած՝ վերադառնում է դարձեալ Ղարս։ Այսպէս տանջվելով աշխատում են մինչև հոկտեմբեր ամիսը. իսկ հոկտեմբերին և նոյեմբերին նրանք սկսում են իրանց առևտուրը փոխել գիւղացիների հետ, չորացած միրգեր են տանում գիւղերը և բերում են իրենց տուրը փոխել գիւղացիների հետ, չորացած միրգեր են տանում գիւղերը և բերում են իրենց տան համար ձմեռվայ պաշար՝ ցորեն, իւղ, պանիր, անար, բրինձ և այլն, և այլն...

Իսկ վարելահողերը ում ձեռքն են. վարելահողերը տաճիկների ձեռքն են եղել, իսկ հիմայ եթէ գաղթել են, այդ հողերը ծախել են հարուստների վրա, բայց այս ևս պէտք է ասած, որ սրանց վարելահողերը բաւականացուցիչ չեն բընակիչներին։

Գալով վաճառականներին այսչափ կասեմ, որ տեղիս վաճառականները, արհեստաւորները բոլորն էլ օտարներն են։ Ուրեմն ահա համառօտապէս նկարագրելով տեղիս ժողովրդեան դրութիւնը, այժմ մի փոքրիկ կարծիք ևս հարկաւոր է յայտնել նրանց մտաւոր զարգացման մասին։

Արդեօք սրանք կարող են պահել կանոնաւոր ուսումնարան, ինչպէս Ռուսաստանի ուրիշ գիւղերում և քաղաքներում. կարող են սրանք հասարակութեան օգտակար մասերի վրա մտածել, կարող են ուսումնարանի, եկեղեցու և այլ ընդհանրութեան վրա մտածել։ Ես, իմ կարծիքով, կը պատասխանեմ վերոյիշեալ հարցերին, ոչ. կաղզուանցիք երբէք չեն կարող հասարակութեան վերաբերեալ մասերի վրա մտածել այն պատճառով, որ սրանք յունիս ամսից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը չարչարվելով հաղիւ իրանց տարեկան պիտոյքներն են հոգում և, եթէ կարելի է ասել, ամիսներով դրացին դրացու երես չէ տեսնում, հետևաբար ինչպէս որ մարմնով հեռու են իրարից, ևս առաւել հոգով, որովհետև խեղճերը ամբողջ տարուայ մէջ ժամանակ չեն կարողանում գտնել, որ իրանց հոգւոյ ցանկութիւնները իրարու հաղորդեն. իսկ սիրելի ընթերցող կառաջարկէ ինձ թէ, թող ձմեռը մտածեն դրա մասին։ Բայց ես կը պատասխանեմ, գիտէք ինչ կայ, սիրելի ընթերցող, նրանք դեկտեմբերից մինչև մեծի պահոց օրերը հաղիւ կարողանում են աչք բացանել խմելուց և իրանց հարսանիքներից, իսկ մեծի պահոց օրերը սկսվում են թէ չէ. դարձեալ սկսում են իրանց աշխատութիւնները։ Ուրեմն պարզ երևաց, որ մի օր ևս ազատ ժամանակ չը կարողացաւ գտնել կաղզուանցին, որ մտածէ ընդհանրութեան՝ ուսումնարանի և եկեղեցու վրա. ուստի խնդրում ենք ուսումնարանների թեմական տեսչից, որ բոլորովին մի առանձին ծրագիր կազմէ կաղզուանի ուսումնարանի համար, որովհետև այս քաղաքի վարչութիւնը բոլորովին բացառութիւն է, ուրեմն ընդհանուր ուսումնարանաց կանոնի տակ չէ կարող մտնել։ Ահա երրորդ ամիսն է երկու ուսուցիչ ունեն և ամսական երկուսին եօթանասուն րուբլի վարձ են վճարում, բայց ուսումնարան դեռ ևս մի աշակերտ չէ մտել, ուսուցիչները բոլորովին փողոցներն են չափում. բայց ի հարկէ ուսուցիչները մեղաւորութիւն չունեն, թող պարոն թեմական տեսուչը ուշ դարձնէ ուսուցչաց վրա։ Մինչդեռ ուրիշ տեղեր ուսուցչի սով է. իսկ կաղզուանում առատութիւն, որովհետև տարին երկու ուսուցիչ ճանապարհ են ձրգում, իսկ ուսումնարանի աշակերտներից տարեկան տասը համալսարան են ուղարկվում։—

Օտար քաղաքացիներից տասը տուն հաղիւ բարի ժառանգներ լինեն. իսկ մնացածը որ քաղաքում որ չար զաւակներ կան, փախել են կաղզուան, բոլորը կապից փախած են. խնդրում ենք ճշմարիտ և պատուելի վաճառականներին, որ մի գուցէ ցանկութիւն ունենան դիմելու կաղզուան, որովհետև կաղզուանը ոչինչ չէ, եթէ ոչ Հայաստանի Սիբիր։

Պարոն թեմական տեսչից խնդրում ենք շուտով բարեկարգէ ուսումնարանը, որպէս զի ժողովրդի բարի զաւակներն էլ չը խառնվեն այն օտար չար զաւակների հետ։

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

Նոյեմբերի 13-ին

«Կովս անյայտացաւ. եղս կորաւ. ոչխարս կերան. դաշս մորթեցին. մոզիս գողացան. գերանս տարան. դուքանս թալանեցին.... և այլ և այլ այսպիսի հազարաւոր տրտունջներ շատ յաճախ կրկնվում են Ղարաքիլիսում։ Բայց երբ հետախուզում ես այդ գողացած ապրանքների ետևից, զարմանում՝ հայ դրացու «հարիւր» միջից է դուրս գալիս, գերանները՝ հայ դրացու տանիքի վրա են գտնվում, ոչխարի միսը՝ հայի տանն է բռնվում, գողացած քարերը՝ հայի տան պատի ճակատին են փայլում, և այլն և այլն։— Սրանով ես երբէք չեմ կամենում բոլոր զարաքիլիսեցիների պատիւը արատաւորել գողութեան մէջ, ոչ. այդպիսի յանցանք ես չեմ վստահանայ գործելու։ Միայն Ղարաքիլիսում, որպէս ցեց, քուն են դրել մի քանի անամօթներ, որոնց սատամոքը սովոր է միայն մարսելու գողացած այծեր, դրացու մօղիներ ու եղներ....

Եթէ երբեմն երբեմն գողութեան մէջ մեղադրվում են կազակներ էլ. հաւատացէք. սիրելի զարաքիլիսեցիք. որ դարձեալ յիշեալ չաթուքեանների մասը մէջն է։ Առանց տանու աւազակների օգնութեան, եթէ մի օտար մարդ մտնում է ձեր տունը, դա հազուագիւտ բացառութիւն պէտք է համարել։ «Գողը միշտ տանից է լինում», որ ահագին եզը երթկից են տանում։—

Այժմ հարցը սրանումն է թէ, երբ Ղարաքիլիսի իշխանները իրանց բարի աչքով պոլիցիայի ուղղաւորի ներկայութեան գողացած ապրանքները ամենագթաւոր փաստերով որ ապացուցանում են այս և այն դրացու վրա, հանելով նրա տանից զազի միսը, ոչխարի զաուրմէն, գողացած գերանները.... ինչ են անում այդպիսի անարեւ ու լիրբ գողերին։—Ոչինչ չեն անում մեր մարդասէր և բարեխիղճ իշխանները։ «Բան չը կայ, գլոխն քարն է տուել. երկու գերան է գողացել, թող չորսը վճարէ. մի ոչխար է կերել, թող երկու ոչխար տայ....» ասում են մեր բարեխիղճները և ակնյայտանի գողին դարձեալ և դարձեալ ներում։ Այժմ հարցնում ենք. այսպիսի թեթև նախատական խօսքերով կարելի է ապականված գողին խրատել և կամ գողութիւնը արմատախիլ անել գիւղից։ Մարդասիրութիւնն էլ, զիջողութիւնն էլ իր չափն ու սահմանն ունի։ Այդպիսի շռայլ մարդասիրական զիջողութեամբ. ինչպէս ապացուցանում են, գողին աւելի վարժեցնում ենք իր ապականված արհեստի մէջ և, որ վտանգաւորն է, ուրիշներին էլ հրապուրում ենք դէպի այդ կորստաբեր ճանապարհը։ Վերջապէս այդպիսի վնասակար զիջողութեանց հետեանքն այն կը լինի, որ զարաքիլիսեցիք, մի քանի տարուց յետոյ, երկու գողի փոխանակ, կունենան մի քանի գողեր։ Թող խրատ լինի մեզ համար Շամամլին, որի բնակիչները, մէկը միւսից չար օրինակ առնելով, այսօր շատ քչերը ազատ են «գող» անունը կրելուց։ Ով Շամամլիի միջից անցկենայ, երկու աչքի փոխանակ տասն աչք պէտք է ունենայ, որ կարողանայ «տաղ տալամաթ» դուրս գալ գիւղից։ Իսկ եթէ գիշերը այդտեղ իջևանեց ու ոչինչ չը կորցրեց, կատարեալ հրաշք պէտք է համարել։ Է՛հ. թողնենք այդ ապականված գիւղը։

Օտարականը առաջին անգամ Ղարաքիլիս մտնելիս, դեռ երկու երեք վերստ հեռաւորութիւնից կը նկատէ գիւղի վերին ծայրում մի եռայարկանի վիթխարի շինութիւն, բազմաթիւ բաց լուսամուտներով ու դռներով։ «Արդեօք դա պալատ է, մարտկոց է, նշանաւոր հարուստի ապարանք է»..... հարց ու խնդիր կանէ ինքն իրան հետաքրքրված օտարականը, որ մտնելով այդ փառաւոր շինութեան մէջ, կը զարմանայ, տեսնելով նրա երեք յարկերի մէջ բազմաթիւ սենեակներ ու բաժանմունքներ։ «Այա՝ հարուստ իշխանի դահլիճն է, սա՝ ընդունարանն է, սա՝ առանձնասենեակն է, սա ննջարանն է, սա՝ սեղանատունն է»..... ենթադրում է ինքն իրան օտարականը, «բայց սա ինչ է, սա, սա, սա»... կրկին հարցնում է հետաքրքիր մարդը։ Վերջապէս օտարականը այդ հոյակապ շինութեան բոլոր ծակ ու ծուկը շրջելով դուրս է գալիս այդտեղից հեռանալ հառաչանքով. «ախ, ափսոս որ աւերակ ես, ողորմելի շինութիւն»։

Հետաքրքիր ընթերցող, այս եռայարկանի բարձրագագաթ շինութիւնը մի անուանի հարուստի (Զուբալովի) արաղի գործարանն է եղել։ Իսկ վերին յարկը նրա զարդարուն բնակարանն էր։ Պ. Զուբալովը դուրս հանելով գործարանի միջից իր կարասիները և գործարանի բոլոր իրեղէնները, դատարկ պատերը շինած պատրաստի, կարծեմ 71 թուին, 5 հարիւր րուբլիով ծախում է տեղիս դպրոցի վրա։ Դա մի բաղդ էր, որ 10 հազար րուբլու շինութիւնը 5 հարիւր րուբլով կարողանում է առնել հեռատես հոգաբարձութիւնը։ Հէնց այս բոպէիս այս շինութիւնը, իր առջև գտնված դատարկ գետինով, դարձեալ 10 հազար րուբլի արժէ։ Բայց անհոգութեան երեսից այդ շինութիւնը իր գերեզմանին է մօտենում։ Անգութ և անխիղճ մարդիկ առանց ամաչելու գողանում, անզգաստ տանում են պատի քարերը և վրէն ամրացրած գերանները։ Այսպէս շարունակվելով, մի 5 տարուց յետոյ, այդ փառաւոր շինութեան հետքն էլ չի երևայ և դպրոցի 5 հարիւր րուբլին էլ զուր կը կորչի։— Հարց. կարելի է վերանորոգել։

Եթէ իւրաքանչիւր տուն ձրի բերի 5 օայլ քար, վճարի երկու փայտ և մի մշակ ուղարկի չորս օր բանելու և այս բոլոր ձրի օգնութեան հետ եթէ հոգաբարձութիւնը ծախսէ 5 հազար րուբլի, այն ժամանակ այդ փառաւոր շինութիւնը կարժենայ մինչև 20 հազար րուբլ և իր մէջ կը տեղաւորէ՝ երկսեռ դպրոցները, մի թատրոնական համեստ բեմ և դեռ մի քանի սենեակ էլ վարձով կը տրվի. որից կարելի է եկամուտ ստանալ գոնէ 500 ր. տարեկան։ Իսկ հին դպրոցը կամ կը ծախվի գոնէ 5 հազար րուբլով, կամ տարեկան քրէհ կը բերէ գոնէ 200 րուբլի։

Ղարաքիլիսում այնպիսի իւղալի հարուստներ կան, որոնք ոչ թէ երկու գերան, այլ եթէ ցանկանան 20 գերան էլ կը տան։ «Բայց ինչ եմ ասում. Ղարաքիլիսի նշանաւոր հարուստներից մէկն էլ Աթոյենց Յովհաննէսն է, որ 40 հազար րուբլի քանկումն ունի, տարեկան մի 4 հազար րուբլ էլ ուրիշ զուտ եկամուտ ունի, բայց այդ հայ կրեատորը, հաստատ գիտեմ, որ ոչ միայն երկու մարդակ չի տայ, այլ շատ ուրախ կը լինի, եթէ այդ շինութիւնը քանդեն և մի քանի քար էլ իր տունը ուղարկեն։ Բայց մեծատեսակ հարուստները չեմ կասկածում, որ իրանց արժանաւոր չափով կօգնեն։—Բայց օգտաւէտ է այժմ այդ հարցը զարթեցնել, թէ ոչ. ես կարծում եմ որ օգտաւէտ է և գործը իր նպատակին կը հասնի, եթէ փորձող լինի։ Ես մինչև անգամ համոզված եմ, որ կայ մի հայրենասէր և բարեսիրտ անձն, որ թէև Ղարաքիլիսից հեռու է, բայց սրտով կապված է իր նախկին դրացիների հետ, ինչպէս ցոյց են տալիս նրա ազգասիրական գործերը։ Հէնց որ սկսվեց այդ շինութեան վերանորոգութիւնը, յիշեալ անձն դարձեալ չը պիտի խնայէ իր օգնութիւնը իր հայրենակիցներին։

Թող ժողով կազմեն, չափեն, ձևեն, խորհեն, եթէ անհնար է, դարձեալ մի քանի ժամանակ էլ համբերեն։

Երէկ դարձեալ երկու գերան գողացել տարել էին այս շինութիւնից։ Այդ գողութիւնը պատճառ եղաւ, որ այս քանի խօսքը նուիրեցինք այդ աւերակներին։

Ինձ շատ լաւ յայտնի է որ «Մշակը» մինչև կակորդը խրված է զանազան տեսակ նեղութիւնների մէջ. հարկաւոր է կամ կարճ գրել կամ լուրի ձևով դուրս բերել, բայց այսպիսի բաները լուրի ձևով գրելով ոչինչ դուրս չէ գալիս։ Բոլորովին լռելով և ոչինչ չը գրելով էլ մեր ցաւերը բարդվում են միմանց վրա և վատ հետևանքներ առաջացնում։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ յանձնեցինք պ. Գիւրջեանին մեր խմբագրութեան մէջ եղած փողերը, որոնք գոյացան նրա ֆոտոգրաֆիական ժողովածուի ծախքից, իսկ այսօր ստացանք Աստրախանից, պ. Կարապետ Դաւթեանից 20 րուբլ նոյն ժողովածուի մի օրինակի համար։

Աստրախանից պ. Կ. Դաւթեանից ստացանք 3 րուբլ «Փուրնալ դ'Օրիանի» բաժանորդագին։ Առաջվայ փողերի հետ կանի 817 րուբլ։

Համայնքանը այս բոպէիս, ինչպէս մեզ գրում են, բաժանված է երկու կուսակցութիւնների, որոնք կազմվել են դպրոցի մասին եղած երկպառակութիւնների պատճառով. իսկ դպրոցը մինչև հիմա էլ բացված չէ։ Մի կուսակցութիւն միւսի բերած վարժապետին չէ ուզում ընդունակաւոր։ Այդ բոլոր խռովութիւնների պատճառը, ինչպէս հաւատացնում են, մի անձն է, որ ինքն է կամենում վարժապետ դառնալ։

Աստրախանից ստացանք 137 րուբլ պ. Բաֆֆին յանձնելու համար։

Կովկասեան պատուոյ ացոյցի հրատարակող պ. Կօնդրատէնկօ ուղարկել է մեր խմբագրութեանը իր այդ օրացոյցի մի օրինակ։ Ամբողջ տարի, պէտք է խոստովանվել, օրացոյցը աւելի մեծ խնամքով է հրատարակված, քան թէ առաջվայ ժամանակներում։ Նա հարստացրած է հայոց և մահմեդական տոների աւելի հարուստ ցուցակով, նոյնպէս յիշված են օրացոյցի նշանաւոր անցքեր Կովկասեան պատմութեանից։ Երևում է թէ հրատարակողը մեծ աշխատանք է գործ դրել այդ օրացոյցը կազմելու համար։ Տիպը շատ մաքուր է նոյնպէս։

Այս օրերս կը հրատարակենք «Մշակի» մէջ մեր այն բոլոր բաժանորդների անուններն ու ազգանունները, որոնք անցեալ թէ այս տարի, գրվելով մեր լրագրին չեն վճարել իրանց բաժանորդագինը։

Մեզ պատմում են որ գաւառներում շրջում են քահանաներ և աբեղաներ, Հայաստանի սուրբերի անունով փողեր ժողովելով հայոց հասարակութեան մէջ և հաւատացնելով ժողովրդին վերաբերեալ մասերի վրա մտածել այն պատճառով, որ սրանք յունիս ամսից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը չարչարվելով հաղիւ իրանց տարեկան պիտոյքներն են հոգում և, եթէ կարելի է ասել, ամիսներով դրացին դրացու երես չէ տեսնում, հետևաբար ինչպէս որ մարմնով հեռու են իրարից, ևս առաւել հոգով, որովհետև խեղճերը ամբողջ տարուայ մէջ ժամանակ չեն կարողանում գտնել, որ իրանց հոգւոյ ցանկութիւնները իրարու հաղորդեն. իսկ սիրելի ընթերցող կառաջարկէ ինձ թէ, թող ձմեռը մտածեն դրա մասին։ Բայց ես կը պատասխանեմ, գիտէք ինչ կայ, սիրելի ընթերցող, նրանք դեկտեմբերից մինչև մեծի պահոց օրերը հաղիւ կարողանում են աչք բացանել խմելուց և իրանց հարսանիքներից, իսկ մեծի պահոց օրերը սկսվում են թէ չէ. դարձեալ սկսում են իրանց աշխատութիւնները։ Ուրեմն պարզ երևաց, որ մի օր ևս ազատ ժամանակ չը կարողացաւ գտնել կաղզուանցին, որ մտածէ ընդհանրութեան՝ ուսումնարանի և եկեղեցու վրա. ուստի խնդրում ենք ուսումնարանների թեմական տեսչից, որ բոլորովին մի առանձին ծրագիր կազմէ կաղզուանի ուսումնարանի համար, որովհետև այս քաղաքի վարչութիւնը բոլորովին բացառութիւն է, ուրեմն ընդհանուր ուսումնարանաց կանոնի տակ չէ կարող մտնել։ Ահա երրորդ ամիսն է երկու ուսուցիչ ունեն և ամսական երկուսին եօթանասուն րուբլի վարձ են վճարում, բայց ուսումնարան դեռ ևս մի աշակերտ չէ մտել, ուսուցիչները բոլորովին փողոցներն են չափում. բայց ի հարկէ ուսուցիչները մեղաւորութիւն չունեն, թող պարոն թեմական տեսուչը ուշ դարձնէ ուսուցչաց վրա։ Մինչդեռ ուրիշ տեղեր ուսուցչի սով է. իսկ կաղզուանում առատութիւն, որովհետև տարին երկու ուսուցիչ ճանապարհ են ձրգում, իսկ ուսումնարանի աշակերտներից տարեկան տասը համալսարան են ուղարկվում։—

Օտար քաղաքացիներից տասը տուն հաղիւ բարի ժառանգներ լինեն. իսկ մնացածը որ քաղաքում որ չար զաւակներ կան, փախել են կաղզուան, բոլորը կապից փախած են. խնդրում ենք ճշմարիտ և պատուելի վաճառականներին, որ մի գուցէ ցանկութիւն ունենան դիմելու կաղզուան, որովհետև կաղզուանը ոչինչ չէ, եթէ ոչ Հայաստանի Սիբիր։

Պարոն թեմական տեսչից խնդրում ենք շուտով բարեկարգէ ուսումնարանը, որպէս զի ժողովրդի բարի զաւակներն էլ չը խառնվեն այն օտար չար զաւակների հետ։

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

Նոյեմբերի 13-ին

«Կովս անյայտացաւ. եղս կորաւ. ոչխարս կերան. դաշս մորթեցին. մոզիս գողացան. գերանս տարան. դուքանս թալանեցին.... և այլ և այլ այսպիսի հազարաւոր տրտունջներ շատ յաճախ կրկնվում են Ղարաքիլիսում։ Բայց երբ հետախուզում ես այդ գողացած ապրանքների ետևից, զարմանում՝ հայ դրացու «հարիւր» միջից է դուրս գալիս, գերանները՝ հայ դրացու տանիքի վրա են գտնվում, ոչխարի միսը՝ հայի տանն է բռնվում, գողացած քարերը՝ հայի տան պատի ճակատին են փայլում, և այլն և այլն։— Սրանով ես երբէք չեմ կամենում բոլոր զարաքիլիսեցիների պատիւը արատաւորել գողութեան մէջ, ոչ. այդպիսի յանցանք ես չեմ վստահանայ գործելու։ Միայն Ղարաքիլիսում, որպէս ցեց, քուն են դրել մի քանի անամօթներ, որոնց սատամոքը սովոր է միայն մարսելու գողացած այծեր, դրացու մօղիներ ու եղներ....

Եթէ երբեմն երբեմն գողութեան մէջ մեղադրվում են կազակներ էլ. հաւատացէք. սիրելի զարաքիլիսեցիք. որ դարձեալ յիշեալ չաթուքեանների մասը մէջն է։ Առանց տանու աւազակների օգնութեան, եթէ մի օտար մարդ մտնում է ձեր տունը, դա հազուագիւտ բացառութիւն պէտք է համարել։ «Գողը միշտ տանից է լինում», որ ահագին եզը երթկից են տանում։—

Այժմ հարցը սրանումն է թէ, երբ Ղարաքիլիսի իշխանները իրանց բարի աչքով պոլիցիայի ուղղաւորի ներկայութեան գողացած ապրանքները ամենագթաւոր փաստերով որ ապացուցանում են այս և այն դրացու վրա, հանելով նրա տանից զազի միսը, ոչխարի զաուրմէն, գողացած գերանները.... ինչ են անում այդպիսի անարեւ ու լիրբ գողերին։—Ոչինչ չեն անում մեր մարդասէր և բարեխիղճ իշխանները։ «Բան չը կայ, գլոխն քարն է տուել. երկու գերան է գողացել, թող չորսը վճարէ. մի ոչխար է կերել, թող երկու ոչխար տայ....» ասում են մեր բարեխիղճները և ակնյայտանի գողին դարձեալ և դարձեալ ներում։ Այժմ հարցնում ենք. այսպիսի թեթև նախատական խօսքերով կարելի է ապականված գողին խրատել և կամ գողութիւնը արմատախիլ անել գիւղից։ Մարդասիրութիւնն էլ, զիջողութիւնն էլ իր չափն ու սահմանն ունի։ Այդպիսի շռայլ մարդասիրական զիջողութեամբ. ինչպէս ապացուցանում են, գողին աւելի վարժեցնում ենք իր ապականված արհեստի մէջ և, որ վտանգաւորն է, ուրիշներին էլ հրապուրում ենք դէպի այդ կորստաբեր ճանապարհը։ Վերջապէս այդպիսի վնասակար զիջողութեանց հետեանքն այն կը լինի, որ զարաքիլիսեցիք, մի քանի տարուց յետոյ, երկու գողի փոխանակ, կունենան մի քանի գողեր։ Թող խրատ լինի մեզ համար Շամամլին, որի բնակիչները, մէկը միւսից չար օրինակ առնելով, այսօր շատ քչերը ազատ են «գող» անունը կրելուց։ Ով Շամամլիի միջից անցկենայ, երկու աչքի փոխանակ տասն աչք պէտք է ունենայ, որ կարողանայ «տաղ տալամաթ» դուրս գալ գիւղից։ Իսկ եթէ գիշերը այդտեղ իջևանեց ու ոչինչ չը կորցրեց, կատարեալ հրաշք պէտք է համարել։ Է՛հ. թողնենք այդ ապականված գիւղը։

Օտարականը առաջին անգամ Ղարաքիլիս մտնելիս, դեռ երկու երեք վերստ հեռաւորութիւնից կը նկատէ գիւղի վերին ծայրում մի եռայարկանի վիթխարի շինութիւն, բազմաթիւ բաց լուսամուտներով ու դռներով։ «Արդեօք դա պալատ է, մարտկոց է, նշանաւոր հարուստի ապարանք է»..... հարց ու խնդիր կանէ ինքն իրան հետաքրքրված օտարականը, որ մտնելով այդ փառաւոր շինութեան մէջ, կը զարմանայ, տեսնելով նրա երեք յարկերի մէջ բազմաթիւ սենեակներ ու բաժանմունքներ։ «Այա՝ հարուստ իշխանի դահլիճն է, սա՝ ընդունարանն է, սա՝ առանձնասենեակն է, սա ննջարանն է, սա՝ սեղանատունն է»..... ենթադրում է ինքն իրան օտարականը, «բայց սա ինչ է, սա, սա, սա»... կրկին հարցնում է հետաքրքիր մարդը։ Վերջապէս օտարականը այդ հոյակապ շինութեան բոլոր ծակ ու ծուկը շրջելով դուրս է գալիս այդտեղից հեռանալ հառաչանքով. «ախ, ափսոս որ աւերակ ես, ողորմելի շինութիւն»։

Հետաքրքիր ընթերցող, այս եռայարկանի բարձրագագաթ շինութիւնը մի անուանի հարուստի (Զուբալովի) արաղի գործարանն է եղել։ Իսկ վերին յարկը նրա զարդարուն բնակարանն էր։ Պ. Զուբալովը դուրս հանելով գործարանի միջից իր կարասիները և գործարանի բոլոր իրեղէնները, դատարկ պատերը շինած պատրաստի, կարծեմ 71 թուին, 5 հարիւր րուբլիով ծախում է տեղիս դպրոցի վրա։ Դա մի բաղդ էր, որ 10 հազար րուբլու շինութիւնը 5 հարիւր րուբլով կարողանում է առնել հեռատես հոգաբարձութիւնը։ Հէնց այս բոպէիս այս շինութիւնը, իր առջև գտնված դատարկ գետինով, դարձեալ 10 հազար րուբլի արժէ։ Բայց անհոգութեան երեսից այդ շինութիւնը իր գերեզմանին է մօտենում։ Անգութ և անխիղճ մարդիկ առանց ամաչելու գողանում, անզգաստ տանում են պատի քարերը և վրէն ամրացրած գերանները։ Այսպէս շարունակվելով, մի 5 տարուց յետոյ, այդ փառաւոր շինութեան հետքն էլ չի երևայ և դպրոցի 5 հարիւր րուբլին էլ զուր կը կորչի։— Հարց. կարելի է վերանորոգել։

Եթէ իւրաքանչիւր տուն ձրի բերի 5 օայլ քար, վճարի երկու փայտ և մի մշակ ուղարկի չորս օր բանելու և այս բոլոր ձրի օգնութեան հետ եթէ հոգաբարձութիւնը ծախսէ 5 հազար րուբլ, այն ժամանակ այդ փառաւոր շինութիւնը կարժենայ մինչև 20 հազար րուբլ և իր մէջ կը տեղաւորէ՝ երկսեռ դպրոցները, մի թատրոնական համեստ բեմ և դեռ մի քանի սենեակ էլ վարձով կը տրվի. որից կարելի է եկամուտ ստանալ գոնէ 500 ր. տարեկան։ Իսկ հին դպրոցը կամ կը ծախվի գոնէ 5 հազար րուբլով, կամ տարեկան քրէհ կը բերէ գոնէ 200 րուբլի։

Ղարաքիլիսում այնպիսի իւղալի հարուստներ կան, որոնք ոչ թէ երկու գերան, այլ եթէ ցանկանան 20 գերան էլ կը տան։ «Բայց ինչ եմ ասում. Ղարաքիլիսի նշանաւոր հարուստներից մէկն էլ Աթոյենց Յովհաննէսն է, որ 40 հազար րուբլի քանկումն ունի, տարեկան մի 4 հազար րուբլ էլ ուրիշ զուտ եկամուտ ունի, բայց այդ հայ կրեատորը, հաստատ գիտեմ, որ ոչ միայն երկու մարդակ չի տայ, այլ շատ ուրախ կը լինի, եթէ այդ շինութիւնը քանդեն և մի քանի քար էլ իր տունը ուղարկեն։ Բայց մեծատեսակ հարուստները չեմ կասկածում, որ իրանց արժանաւոր չափով կօգնեն։—Բայց օգտաւէտ է այժմ այդ հարցը զարթեցնել, թէ ոչ. ես կարծում եմ որ օգտաւէտ է և գործը իր նպատակին կը հասնի, եթէ փորձող լինի։ Ես մինչև անգամ համոզված եմ, որ կայ մի հայրենասէր և բարեսիրտ անձն, որ թէև Ղարաքիլիսից հեռու է, բայց սրտով կապված է իր նախկին դրացիների հետ, ինչպէս ցոյց են տալիս նրա ազգասիրական գործերը։ Հէնց որ սկսվեց այդ շինութեան վերանորոգութիւնը, յիշեալ անձն դարձեալ չը պիտի խնայէ իր օգնութիւնը իր հայրենակիցներին։

Թող ժողով կազմեն, չափեն, ձևեն, խորհեն, եթէ անհնար է, դարձեալ մի քանի ժամանակ էլ համբերեն։

Երէկ դարձեալ երկու գերան գողացել տարել էին այս շինութիւնից։ Այդ գողութիւնը պատճառ եղաւ, որ այս քանի խօսքը նուիրեցինք այդ աւերակներին։

Ինձ շատ լաւ յայտնի է որ «Մշակը» մինչև կակորդը խրված է զանազան տեսակ նեղութիւնների մէջ. հարկաւոր է կամ կարճ գրել կամ լուրի ձևով դուրս բերել, բայց այսպիսի բաները լուրի ձևով գրելով ոչինչ դուրս չէ գալիս։ Բոլորովին լռելով և ոչինչ չը գրելով էլ մեր ցաւերը բարդվում են միմանց վրա և վատ հետևանքներ առաջացնում։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ յանձնեցինք պ. Գիւրջեանին մեր խմբագրութեան մէջ եղած փողերը, որոնք գոյացան նրա ֆոտոգրաֆիական ժողովածուի ծախքից, իսկ այսօր ստացանք Աստրախանից, պ. Կարապետ Դաւթեանից 20 րուբլ նոյն ժողովածուի մի օրինակի համար։

Աստրախանից պ. Կ. Դաւթեանից ստացանք 3 րուբլ «Փուրնալ դ'Օրիանի» բաժանորդագին։ Առաջվայ փողերի հետ կանի 817 րուբլ։

Համայնքանը այս բոպէիս, ինչպէս մեզ գրում են, բաժանված է երկու կուսակցութիւնների, որոնք կազմվել են դպրոցի մասին եղած երկպառակութիւնների պատճառով. իսկ դպրոցը մինչև հիմա էլ բացված չէ։ Մի կուսակցութիւն միւսի բերած վարժապետին չէ ուզում ընդունակաւոր։ Այդ բոլոր խռովութիւնների պատճառը, ինչպէս հաւատացնում են, մի անձն է, որ ինքն է կամենում վարժապետ դառնալ։

Աստրախանից ստացանք 137 րուբլ պ. Բաֆֆին յանձնելու համար։

Կովկասեան պատուոյ ացոյցի հրատարակող պ. Կօնդրատէնկօ ուղարկել է մեր խմբագրութեանը իր այդ օրացոյցի մի օրինակ։ Ամբողջ տարի, պէտք է խոստովանվել, օրացոյցը աւելի մեծ խնամքով է հրատարակված, քան թէ առաջվայ ժամանակներում։ Նա հարստացրած է հայոց և մահմեդական տոների աւելի հարուստ ցուցակով, նոյնպէս յիշված են օրացոյցի մէջ նշանաւոր անցքեր Կովկասեան պատմութեանից։ Երևում է թէ հրատարակողը մեծ աշխատանք է գործ դրել այդ օրացոյցը կազմելու համար։ Տիպը շատ մաքուր է նոյնպէս։

Այս օրերս կը հրատարակենք «Մշակի» մէջ մեր այն բոլոր բաժանորդների անուններն ու ազգանունները, որոնք անցեալ թէ այս տարի, գրվելով մեր լրագրին չեն վճարել իրանց բաժանորդագինը։

Մեզ պատմում են որ գաւառներում շրջում են քահանաներ և աբեղաներ, Հայաստանի սուրբերի անունով փողեր ժողովելով հայոց հասարակութեան մէջ և հաւատացնելով ժողովրդին